

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ


0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ

Հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 109-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետը, 98-րդ և 99-րդ հոդվածները, Զեզ ենք ներկայացնում Ազգային ժողովի «Հայաստան» և «Պատիվ ունեմ» խմբակցությունների կողմից առաջարկող Ազգային ժողովի հայտարարության նախագիծը՝ Հայ-ադրբեջանական և Հայ-թուրքական հարաբերությունների կապակցությամբ՝ այն սահմանված կարգով շրջանառության մեջ դնելու նպատակով:

Կից ներկայացվում են հայտարարության նախագիծը (հիմնական գեկուցող Արմեն Շուստամյան), դրա հիմնավորումը, ինչպես նաև «Հայաստան» և «Պատիվ ունեմ» խմբակցությունների որոշումները (նիստի արձանագրությունից քաղվածքը):

«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ  ԱՐԾՎԻԿ ՄԻՍԱՍՅԱՆ

«ՊԱՏԻՎ ՈՒՆԵՄ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅԱՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ  ՀԱՅԿ ՄԱՍԻՉԱՆՅԱՆ

25.05.2022թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՊԱՏԻՎ ՌԻՆԵՍ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Մ.Բաղրամյան պող. 19, +374 11 51 32 05,

ՀԱՅ-ԱԴՐԲԵԶԱՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

(Քաղվածք իսմբակցության նիստի արձանագրությունից)

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 98-րդ հոդվածի 2-րդ կետով և 99-րդ հոդվածով,

Հիմք ընդունելով Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցության կանոնադրությունը,

Նկատի առնելով «Պատիվ ունեմ» և «Հայաստան» խմբակցությունների համատեղ քննարկումների արդյունքները

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «Պատիվ ունեմ» խմբակցությունը

ՈՐՈՇԵՑ


1. Հավանություն տալ Հայ-թուրքական հարաբերությունների կապակցությամբ «Հայաստան» և «Պատիվ ունեմ» խմբակցությունների համատեղ մշակված հայտարարության նախագծին (կցվում է) և այն սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված հայտարարության նախագծով հիմնական գեկուցողը «Հայաստան» խմբակցության պատգամավոր Արմեն Ռուստամյանն է:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ՀԱՅԿ ՄԱՍԻԶԱՆՅԱՆ

25.05.2022թ.



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
«ՀԱՅԱՍՏԱՆ» ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ

0095, ՀՀ, Երևան, Ա.Քաջարամյան պող. 19, +374 11 51 32 05,

ՀԱՅ-ԱԴՐԲԵՅՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՄԱՍԻՆ

(Քաղվածք իմբակցության նիստի արձանագրությունից)

Առաջնորդվելով «Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով, 98-րդ հոդվածի 2-րդ կետով և 99-րդ հոդվածով,

Հիմք ընդունելով Ազգային ժողովի «Հայաստան» իմբակցության կանոնադրությունը,

Նկատի առնելով «Հայաստան» և «Պատիվ ունեմ» իմբակցությունների համատեղ քննարկումների արդյունքները՝

Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի «ՀԱՅԱՍՏԱՆ» իմբակցությունը

ՈՐՈՇԵՑ

1. Հավանություն տալ Հայ-թուրքական հարաբերությունների կապակցությամբ «Հայաստան» և «Պատիվ ունեմ» իմբակցությունների համատեղ մշակված հայտարարության նախագծին (կցվում է) և այն սահմանված կարգով դնել շրջանառության մեջ:

2. Ընդունել ի գիտություն, որ սույն որոշման 1-ին կետում նշված հայտարարության նախագծով հիմնական գեկուցողը «Հայաստան» իմբակցության պատգամավոր Արմեն Ռուստամյանն է:

ԽՄԲԱԿՑՈՒԹՅՈՒՆ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

ԱՐՄԵՆ ՌՈՒՍՏԱՄՅԱՆ

25.05.2022թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ
ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ

ՀԱՅ-ԱԴՐԲԵՅՆԱԿԱՆ ԵՎ ՀԱՅ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Հիմք ընդունելով ՀՀ անկախության հոչակագիրը, ՀՀ սահմանադրությունը, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության՝ Արցախի ժողովրդի 1991 թվականի դեկտեմբերի 10-ի հանրաքվեի արդյունքները, միջազգային իրավունքի հիմնադրույթները, Ղարաբաղյան հակամարտության կարգավորմանը վերաբերող ԵԱՀԿ Մինսկի հմբի համանախագահների կողմից բազմից ներկայացված հիմնարար սկզբունքները՝

Հայտարարում ենք՝

1. Հայաստանի Հանրապետությունն աջակցելու է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքի լիարժեք իրացմանը և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության միջազգային ճանաչմանը: Հայաստանի Հանրապետության համար անընդունելի է Ղարաբաղյան հակամարտության կարգավորման որևէ վերջնական տարրերակ, որի արդյունքում Արցախը կարող է հայտնվել Ադրբեյջանի կազմում:
2. Պետք է ապահովվի հուսալի ցամաքային կապ Հայաստանի Հանրապետության և Արցախի Հանրապետության միջև՝ բացառելով վերջինիս անկախավային վիճակը:

3. Հայաստանի Հանրապետությունն Արցախի ժողովրդի անվտանգության և ինքնորոշման իրավունքի իրացման երաշխավորն է՝ բոլոր բաղադրիչներով:

4. Ադրբեյջանի Հանրապետության հետ սահմանագծման ու սահմանագատման աշխատանքները պետք է իրականացվեն հումանիտար խնդիրների լուծման (հայ ու ազգագերիների, այլ պահվող անձանց վերադարձ) և Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքից ադրբեյջանական զորքերի դուրս բերման նախապայմանով:

5. Աղբքեցանի հետ սահմանագծման ու սահմանազատման աշխատանքների արդյունքում բացառվում է Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականության խաթարումը:

6. Հայ-թուրքական հարաբերությունների կարգավորման գործընթացում Հայաստանի Հանրապետությունը բացառում է որևէ համաձայնություն, որը հարցականի տակ կդնի հայ ժողովրդի հայրենազրկման և ցեղասպանության իրողությունը, ինչպես նաև հայության հոգևոր-մշակութային ժառանգության կրողը լինելու իրավունքը:

7. Հայ-թուրքական և հայ-աղբքեցանական հարաբերությունների կարգավորումները միմյանց հետ շաղկապված չեն: Աղբքեցանի ու Թուրքիայի հետ կոմունիկացիաների ապաշրջափակումը չի կարող տեղի ունենալ միջանցքային տրամարանությամբ:

Հիմնավորում

44-օրյա պատերազմից հետո Աղրբեջանի և Թուրքիայի կողմից Հայաստանի ու Արցախի Հանրապետությունները ենթարկվում են տարատեսակ հարձակումների՝ ռազմական, հոգեբանական, քարոզչական և այլն:

Աղրբեջանական զորքերը գտնվում են Հայաստանի ինքնիշխան տարածքում, չեն վերադարձվել հայ ռազմագերիները, այլ պահվող անձինք:

Թեև Թուրքիան հայտարարել է, որ կողմ է հայ-թուրքական հարաբերությունների կարգավորմանն առանց նախապայմանների, այդուհանդեռ չի շտապում ՀՀ-ի հետ հաստատել միջակետական հարաբերություններ, ապաշրջափակել կոմունիկացիաները՝ այդ ամենը շաղկապելով հայ-աղրբեջանական հարաբերությունների ընթացքի հետ, ինչը նշանակում է, որ հայ-թուրքական հարաբերությունների կարգավորումն ընթանում է թուրք-աղրբեջանական կոշտ նախապայմանների առկայությամբ:

Թուրքիան ու Աղրբեջանն իրենց մտադրություններն ու հեռահար նպատակները Հայաստանի ու Արցախի Հանրապետությունների մասով ամրագրել են 2021 թվականի հունիսի 15-ին օկուպացված Շուշիում ստորագրած հոչակագրով:

Հայաստանի Հանրապետությունն այս պայմաններում պետք է հոչակի իր անվտանգությանը և գոյությանը վերաբերող կարմիր գծերը և ամեն գնով պաշտպանի դրանք: Մինչդեռ Հայաստանի Հանրապետության իշխանությունները, այսպես կոչված խաղաղության դարաշրջանի հաստատման ծրագրի շրջանակներում, գնում են Թուրքիայի ու Աղրբեջանի բոլոր նախապայմանների բավարարման ճանապարհով, ինչն անթույլատրելի է և սպառնում է Հայաստանի ու Արցախի գոյությանը:

2022 թվականի մայիսի 23-ին Բրյուսելում Եվրոպական խորհրդի նախագահ Շարլ Միշելի միջնորդությամբ տեղի ունեցած Նիկոլ Փաշինյանի ու Իլհամ Ալիևի հանդիպման արդյունքներից պարզ դարձավ, որ շրջանառությունից դուրս են եկել «Լեռնային Ղարաբաղ» և «Լեռնային Ղարաբաղի ժողովուրդ» եզրույթները: Փոխարեն օգտագործվել է «Ղարաբաղի եթնիկ հայկական բնակչություն» ձևակերպումը և խոսվել է Ղարաբաղի հայերի անվտանգության և իրավունքների մասին, որոնք պետք է ապահովի Աղրբեջանը:

Սա նշանակում է, որ Ղարաբաղի հայերը, ըստ Փաշինյան-Ալին համաձայնության, դիտարկվում են որպես ազգային փոքրամասնություն՝ Աղրբեջանի կազմում։ Նույնիսկ օգտագործվել է «Հայաստանի տարբեր շրջանների միջև Աղրբեջանի տարածքով տարանցման» եզրույթը, ինչը ևս ծայրահեռ վտանգավոր հետևանքներ է առաջացնում՝ ընդհուպ Հայաստանի ինքնիշխանության, տարածքների նկատմամբ աղրբեջանական հերթական ապօրինի պահանջների հնարավորություն։

Ելնելով վերը նշվածից՝ Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովը պետք է սահմանի Հայաստանի ու Արցախի Հանրապետություններին վերաբերող, հայ-թուրքական, հայ աղրբեջանական հարաբերություններին առնչվող այն կարմիր գծերը, որոնք Հայաստանի որևէ իշխանություն չպետք է անցնի։